ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 մայիսի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

70
(3101)

100 դրամ

Քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՇԻՇ ԲՌՆՈՂ»-ԻՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՈՏ 40 ՀԱՐՑ ԵՆ ՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ երեկ ԱԺ-ում ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանի եւ ՔՊ խմբակցության պատգամավորների 4 ժամ տեւած դռնփակ հանդիպումը բավականին թեժ է եղել: Ըստ մեր տեղեկությունների՝ շուրջ 40 պատգամավոր է գրանցվել նախարար Պապիկյանին ու ՔՊ խմբակցության պատգամավոր, մականունավոր՝ մեդիադաշտում «Շիշ բռնող» անունով հայտնի Հայկ Սարգսյանին հարցեր ուղղելու համար, ովքեր ներկայացրել են մի սկանդալային նախագիծ, ըստ որի՝ գումար մուծելու դեպքում ՀՀ քաղաքացին կարող է կրճատել իր զինվորական ծառայության չափը, կամ ընդհանրապես չծառայել: Երեկ ՔՊ-ականները, կարելի է ասել, «հարձակվել» են Սուրեն Պապիկյանի ու Հայկ Սարգսյանի վրա՝ պահանջելով չեղարկել նախագիծը, քանի որ այն իրականում խտրական վերաբերմունք է պարունակում հանրության աղքատ խավի համար: Իսկ Հայկ Սարգսյանն անդրդվելի է մնացել. ՔՊ-ականների գրեթե բոլոր հարցերին նա պատասխանել է, թե շատ լավ նախագիծ է, ու ինքը չի պատրաստվում նախագիծը «հետ կանչել»:

ՔՊ-ականները «նեղն» են գցել նաեւ Պապիկյանին՝ հայտարարելով, որ իրենց համար անհասկանալի է, թե նման անմշակ նախագծին ինչպես կարող էին հավանություն տալ ՊՆ-ում: Իհարկե, Պապիկյանն ու Սարգսյանը բացատրել են, որ եթե գումար վճարեն, իրենք այդ պարագայում վճարողներին կվերցնեն որպես պայմանագրային զինծառայողներ, ու արդեն հավասարություն կլինի, բայց ՔՊ-ականները պնդել են, որ սոցիալական անարդարություն է լինելու:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ չորս ժամ տեւողությամբ փակ քննարկումն էլ արդյունք չի տվել, եթե նախագիծը առանց փոփոխության բերվի, ՔՊ-ն պատրաստվում է դեմ քվեարկել դրան:



Ուշագրավ իրավիճակ է ստեղծվել դատական համակարգում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ դատարանները աղմկահարույց գործերով փորձում են ժամանակ ձգձգել, որպեսզի, վաղեմության ժամկետի հիմքով, գործերը, քրեական հետապնդումները դադարեցվեն: Մասնավորապես, օրինակ, Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը դատապարտվեց հինգ ու կես տարվա ազատազրկման: Դատարանն ավելի վաղ 50-ամյա գեներալ-լեյտենանտին մեղավոր էր ճանաչել պատերազմի ժամանակ զինվորական ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսեւորելու համար: Առաջին ատյանի դատարանի այս որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարանում, ու մեղադրվող կողմը ամեն ինչ անում է ՀՀ վերաքննիչ դատարանում նիստերը հետաձգելու համար, որպեսզի վաղեմության ժամկետի հիմքով ամբաստանյալը ազատվի պատասխանատվությունից: Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված գործով քրեական վարույթի վաղեմության ժամկետը հոկտեմբերին կլրանա, ու տուժող ծնողները ահազանգում են, որ նիստերը ամռանը շատ ուշ կնշանակեն ու այնպես կանեն, որ Հարությունյանին ազատեն պատասխանատվությունից: Նշենք, որ Ջալալ Հարությունյանը հրաժարվել է ՀՀ վերաքննիչ դատարանում իր պաշտպաններից, եւ մեր փորձերը՝ գտնելու նրան, անցան ապարդյուն:

Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում կրքերը չեն հանդարտվում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանի մտերիմ շրջանակը փորձում է պարզել, թե ով է համարձակվել ի լուր աշխարհի «ներկայացնել», թե համալսարանում իրականում ինչ իրավիճակ է: Գյուրջինյանը, փոխանակ փորձի հարթել ստեղծված վիճակը, փնտրում է այն անձանց, որոնք «Ժողովուրդ» օրաթերթի միջոցով բաց նամակ են փոխանցել ՀՀ վարչապետին ու պատկան մարմիններին՝ ներկայացնելով այն բարքերը, որոնք տիրում են համալսարանում: Հիշեցնենք, որ դեռեւս մայիսի 20-ին ArmLur.am-ը մի բաց նամակ էր հրապարակել, որտեղ նշված էր, որ համալսարանի՝ Ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր Դոնարա Ղազարյանը, պրոռեկտորի պաշտոնին նշանակվելուց անմիջապես հետո, վերազանցում է իր պարտականությունները՝ ընդլայնելով ապօրինի գործողությունների շարքը: Մասնավորապես, Դ. Ղազարյանը, անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանը, նույն համալսարանի բազմաթիվ աշխատակիցներից պահանջել եւ շարունակում է պահանջել կանխիկ գումար, չունենալու դեպքում՝ պահանջում բանկի հավելվածով գումար փոխանցել իրեն:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թիվը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 3,075,800 մարդ, ինչը 84,600-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: Այս տվյալները ներկայացված են ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տեղեկագրում: Եթե փորձենք տարեկան համեմատությամբ տարբերությունը հասկանալ, ապա կարձանագրենք, որ 2022 թվականին ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 2,937,500 մարդ, 2023 թվականին՝ 2,991,200 մարդ, 2024 թվականին՝ 3,075,800 մարդ: Թեեւ Նիկոլ Փաշինյանի սահմանած «երազանքին» հասնելու համար դեռ շատ կա, բայց չնչին աճ, այնուամենայնիվ, կա: Հարկ է նշել, որ մշտական բնակչության աճը պայմանավորված է նաեւ բնական աճով՝ 2024 թվականին գրանցվել է 33,648 ծնունդ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ԱՐՑԱԽԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

ԻՆՉ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

ArmLur.am-ը զրուցել է Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Աբոն Դանիելյանի հետ:

-Պարոն Դանիելյան, ինչ անելիք ունենք մենք այսօր: Օրերս նշվեց մայիսի 28-ը, այն ինչ է հուշում մեզ, ինչ խորհուրդ ունեն Բաշ-Ապարանում եւ Սարդարապատում ունեցած հաղթանակները:

-Շնորհավորում եմ բոլորիս: 107 տարի առաջ Ղարաքիլիսայում, Բաշ-Ապարանում, Սարդարապատում դրվեցին մեր պետականության հիմքերը: Սակայն, ցավով պետք է նշեմ, որ 107 տարի անց նույն ձեւով կանգնած ենք նույն մարտահրավերների առջեւ: Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի ուժեղանանք, հզորանանք, որպեսզի կարողանանք դիմակայել բոլոր մարտահրավերներին եւ ունենանք նոր հաղթանակներ:

-Պարոն Դանիելյան, մենք ունենք հանրապետությունը պահելու խնդիր, վտանգված է Հայաստանի պետականությունը: Ինչ պետք է անենք:

-Այո, տարածաշրջանում տարբեր զարգացումներ են լինում, եւ այն վտանգները, որոնք կան տարածաշրջանում, նաեւ Հայաստանին են սպառնում: Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի այս փորձություններից դուրս գանք հաղթանակներով:

-Դուք վերջերս ընտրվեցիք Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ, ինչ քայլեր եք անելու, ինչ գործողություններ եք սկսելու:

-Առաջիկայում կլինեն խորհրդակցություններ քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների, քաղաքական դաշտի տարբեր ներկայացուցիչների հետ: Առաջիկայում առավել մասնավոր կտեղեկացնեմ, թե ինչ ծրագրեր կան, որոնցով շարունակելու ենք աշխատել:

-Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը շարունակելու՞ է պաշտոնավարել, թե՞ փոփոխություններ են սպասվում:

-Հիմա քաղաքական խմբակցությունները, դաշինքները կոնսուլտացիաների փուլում են. առաջիկայում սպասեք պաշտոնական լրահոսի ու կտեղեկանաք ամեն ինչի մասին:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՉՈՒ Է ՓԱԿՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑԸ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Հայաստանում երկարամյա գործունեություն իրականացնող 1000+1 տնտեսական խանութների ցանցը որոշում է կայացրել փակել իր առկա խանութները եւ դրանք միավորել «Նաիրի» հանրախանութի հետ:

1000+1 տնտեսական խանութների ցանցի որոշումը կտրուկ փոփոխություն եւ խուճապ է առաջացրել թե՛ ոլորտի, թե՛ սպառողների համար: Խոշոր մանրածախ ցանցը վերջին շրջանում Երեւանի մի քանի վարչական շրջաններում փակել է խանութ սրահները, ինչն էլ անհանգստության պատճառ էր դարձել: Բացի դրանից, փակման վերաբերյալ խանութների ցանցը զեղչերով վաճառում էր ապրանքների մեծ մասը:

1000+1 խանութների ցանցը, որը տարիներ շարունակ եղել է երկրի ամենամեծ եւ ճանաչված մանրածախ ցանցերից մեկը, զարմացնում էր իր հաճախորդներին տարբեր ապրանքատեսակներով՝ տնտեսական ապրանքներից մինչեւ էլեկտրոնիկա:

Լուրեր են շրջանառվում, որ ցանցը երկար տարիներ բարեկեցիկ արդյունքներ էր ցույց տալիս, վերջին շրջանում այն բախվեց մի շարք գործառնական եւ ֆինանսական մարտահրավերների՝ կապված շուկայում տիրող տնտեսական անկայունության, բյուջետային սղության, լոգիստիկ խնդիրների եւ սպառողական պահանջարկի փոփոխությունների հետ:

ArmLur.am-ի հետ զրույցում 1000+1 խանութների ցանցից հրաժարվեցին որեւէ մեկնաբանություն տալ: Սակայն ArmLur.am-ը տեղեկացավ, որ կանոնավոր գործելու են խանութների ցանցի Թումանյան 15 եւ Շիրազի 26/75 հասցեներում գտնվող մասնաճյուղերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է Ակադեմիական քաղաքում նախատեսվող ենթակառուցվածքային աշխատանքների մեկնարկի պլանը:

Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող Gmp International GmbH Architects and Engineers ընկերության ներկայացուցիչները ներկայացրել են ֆիզիկական ենթակառուցվածքների աշխատանքների ուղղությամբ նախատեսվող գործողությունները՝ ըստ ժամանակացույցի: Մասնավորապես, դրանք վերաբերում են ջրապահովմանը, գազի, էլեկտրաէներգիայի, տրանսպորտային եւ այլ ենթակառուցվածքներին: Ներկայացվել են երկաթուղու, ավտոբուսային, մարդատար մեքենաների երթուղիների, ինչպես նաեւ հեծանվային ուղիների նախագծման աշխատանքները:

Անդրադարձ է կատարվել Ակադեմիական քաղաքի սոցիալ-տնտեսական բաղադրիչին, ռազմավարական տնտեսական զարգացմանը, քաղաքային զարգացման շրջանակային տեսլականին:

Gmp International GmbH Architects and Engineers-ի ներկայացուցիչները պատասխանել են խորհրդակցության մասնակիցներին հետաքրքրող հարցերին եւ տվել պարզաբանումներ՝ աշխատանքների կազմակերպման եւ առաջիկա քայլերի վերաբերյալ:

Վարչապետ Փաշինյանն ընդգծել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի ռազմավարական նշանակությունը եւ կարեւորել նախատեսվող աշխատանքների արդյունավետ իրականացումը: Վարչապետը հանձնարարել է պատասխանատու գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձեւավորել աշխատանքային խումբ՝ Gmp International GmbH Architects and Engineers-ի հետ համագործակցությամբ ենթակառուցվածքային աշխատանքները համակարգված կերպով իրականացնելու նպատակով:

ՊԼԱՆՆԵՐ ՉԿԱՆ

Ռուսաստանի եւ ԱՄՆ նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Դոնալդ Թրամփի նոր զրույց դեռ չի նախատեսվում: Այս մասին ճեպազրույցում ասել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ պատասխանելով ՏԱՍՍ-ի հարցին:

«Դեռեւս նման պլաններ չկան», - ասել է Կրեմլի խոսնակը՝ պատասխանելով այն հարցին, թե արդյո՞ք երկու առաջնորդների միջեւ նոր խոսակցություն է նախատեսվում՝ հաշվի առնելով Ուկրաինայի անօդաչու թռչող սարքերի աննախադեպ հարձակումները Ռուսաստանում քաղաքացիական օբյեկտների վրա եւ բանակցությունների նոր փուլի ակնկալիքը Ստամբուլում:

Մայիսի 19-ին Պուտինն ու Թրամփը երրորդ հեռախոսազրույցն են ունեցել տարեսկզբից ի վեր: Դրա ընթացքում երկու երկրների ղեկավարները քննարկել են երկկողմ հարաբերությունները եւ ուկրաինական կարգավորումը, մասնավորապես՝ Մոսկվա-Կիեւ հուշագրերի գաղափարը, որը կսահմանի կողմերի տեսակետները հրադադարի պայմանների վերաբերյալ:

Մինչ այդ ՌԴ եւ ԱՄՆ նախագահները խոսել են փետրվարի 12-ին եւ մարտի 18-ին, անդրադարձել են նաեւ Մոսկվայի եւ Վաշինգտոնի հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաեւ Ուկրաինայի կարգավորման տարբեր ասպեկտներին:

ՓԵԶԵՇՔԻԱՆԸ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մասկատում Օմանի լրատվական գործակալությանը (ONA) եւ Օմանի հեռուստատեսությանը տված հարցազրույցում Փեզեշքիանը ընդգծել է Իրանի վճռականությունը՝ խաղաղ նպատակներով օգտագործելու միջուկային տեխնոլոգիաները:

Իրանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ արդար համաձայնագրի հասնելու շուրջ միջուկային բանակցությունների վերաբերյալ նախագահը շեշտել է, որ ցանկացած երկիր կարող է անցկացնել ուրանի հարստացման հետ կապված մասնագիտացված գիտական հետազոտություններ եւ օգտագործել միջուկային էներգիան խաղաղ նպատակներով:

Փեզեշքիանը վերահաստատել է, որ Իրանը որեւէ ձեւով չի ձգտում միջուկային զենքի ընդլայնմանը, այլ ձգտում է օգուտ քաղել բժշկության, էներգետիկայի եւ տնտեսության ոլորտներում զարգացումներից:

Փեզեշքիանը նաեւ կոչ է արել միջազգային հանրությանը կատարել իր պարտականությունները եւ քայլեր ձեռնարկել դադարեցնելու Իսրայելի ռեժիմի կողմից պաշարված Գազայի հատվածում անմեղ քաղաքացիների դեմ իրականացվող ցեղասպանությունն ու կոտորածները:

ՆԱԽԱՐԱՐԸ ԿԱՅՑԵԼԻ ՈՒԿՐԱԻՆԱ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը մայիսի 29-30-ը կայցելի Ուկրաինա՝ իր ուկրաինացի գործընկեր Անդրեյ Սիբիգայի հրավերով:

Ըստ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության հայտարարությունների՝ սպասվում է, որ Ֆիդանը կհանդիպի Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու եւ վարչապետ Դենիս Շմիգալի հետ, ինչպես նաեւ երկկողմ հանդիպումներ կունենա բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այդ թվում՝ Ուկրաինայի նախագահի գրասենյակի ղեկավար Անդրեյ Երմակի եւ Ուկրաինայի պաշտպանության նախարար Ռուստեմ Ումերովի հետ, ով գլխավորել էր Ուկրաինայի պատվիրակությունը Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջեւ Ստամբուլում 2025 թվականի մայիսի 16-ին կայացած ուղիղ բանակցությունների ընթացքում:

Նշվում է նաեւ, որ հանդիպումների ընթացքում Ֆիդանը կվերահաստատի Թուրքիայի աջակցությունը Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանը եւ անկախությանը:

Հանդիպում է նախատեսվում նաեւ Ղրիմի թաթարների ազգային առաջնորդ եւ Ուկրաինայի խորհրդարանի անդամ Մուստաֆա Կիրիմօղլուի եւ Ղրիմի թաթարների ազգային մեջլիսի նախագահ Ռեֆաթ Չուբարովի հետ:

ԿԱՐԾԵՍ ՄՏԱՀՈԳ ՉԷ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

«ԲՐՅՈՒՍՈՎԻ» ԱՆՎԱՆԳԻՍՏ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՌԵԿՏՈՐԻ ՀԱՆԳԻՍՏԸ

Armlur.am-ը տեղեկացավ, որ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում շարունակվող լարվածության ֆոնին ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը վայելում է իր հանգիստը Հայաստանի գեղատեսիլ վայրերում:

Ըստ Armlur.am-ի տեղեկությունների՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում ներկա դրությամբ իրավիճակը շարունակում է մնալ թեժ եւ լարված: Սակայն զարմանալի է, որ չնայած այս ամենին, համալսարանի ռեկտորը՝ Դավիթ Գյուրջինյանը, ասես անտեսելով առկա խնդիրները, իր ֆեյսբուքյան էջում ակտիվ հրապարակում է լուսանկարներ Հայաստանի գեղատեսիլ վայրերից՝ մասնավորապես Ահնիձորից, Ախթալայից եւ Սանահինից՝ ակնհայտորեն վայելելով իր հանգիստը եւ կարծես անտեսելով համալսարանում առկա խնդիրները:

Այս փաստը հարցեր է առաջացնում հանրության շրջանում, թե որքանով է ռեկտորը մտահոգված համալսարանում առկա խնդիրներով, եւ որքանով է պատրաստակամ՝ լուծելու դրանք:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ ձեռք է բերել անստորագիր նամակ, որում մանրամասն ներկայացվում են Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում տիրող խնդիրները: Նամակն ուղղված է վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ այլ պաշտոնատար անձանց, եւ ներկայացնում է կոռուպցիոն ռիսկեր, խտրականություն եւ կամայականություններ, որոնք, ըստ հեղինակի, խաթարում են համալսարանի բնականոն գործունեությունը:

Ամենասկանդալային մեղադրանքներից մեկը վերաբերում է Ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր Դոնարա Ղազարյանին, ում մեղադրում են աշխատակիցներից գումար պահանջելու եւ կասկածելի վարկային գործարքներ իրականացնելու համար: Նամակում նշվում է, որ ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը տեղյակ է այս ամենի մասին, բայց միջոցներ չի ձեռնարկում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՈՐԾԸ ՀԱՆՁՆՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ



ArmLur.am-ը տեղեկացավ, որ դատախազը երեկ իրավասու դատարան է հանձնել ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 3 միլիոն ԱՄՆ դոլար առերեւույթ կաշառք ստանալու վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ հաստատված քրեական վարույթի նյութերը:

Քրեական վարույթի շրջանակում մեղադրանք է ներկայացվել նաեւ Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ եւ լիազոր նախկին դեսպան Միքայել Մինասյանին եւ գործարար Սամվել Մայրապետյանին:

Համաձայն Սերժ Սարգսյանին՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով ներկայացված մեղադրանքի՝ վերջինս միջնորդավորված կերպով կաշառք է ստացել գործարար Սիլվա Համբարձումյանից՝նրան պատկանած ընկերության օտարման գործարքին չխոչընդոտելու համար: Կաշառքը ստացել է մաս-մաս՝2 միլիոն 660 հազար դոլարը՝ կանխիկ, 325 հազարը՝ անկանխիկ եղանակով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

Կառավարությունն ընդունել է որոշում, համաձայն որի՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին տրվող հիմնական արձակուրդի ժամկետները կավելացվեն:

Շարքայինների համար 10, իսկ սերժանտական կազմի՝ 15 օրացուցային օր ժամկետով հիմնական արձակուրդը փոխարինվել է ընդհանուր 21, իսկ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված զորամասերում (մարտական հերթապահություն իրականացնող) ծառայություն անցնողների համար՝ ընդհանուր 30 օրացուցային օր ժամկետով արձակուրդով, որը կտրվի ծառայության ընթացքում հավասար երեք մասերով:

Պարտադիր զինծառայողների համար 2 օր ժամկետով լրացուցիչ արձակուրդ է սահմանվում զինվորական երդում ընդունելու կապակցությամբ:

ՆՈՐ ՆՈՐՔԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի որոշմամբ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար է նշանակվել Մարատ Սեւոյանը: Այս մասին տեղեկացնում է Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը:

Հիշեցնենք, որ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Տիգրան Տեր-Մարգարյանը դադարեցրել է իր լիազորությունները թաղապետարանի շենքում տեղի ունեցած սկանդալային կռվից հետո:

Հայտնի ակտիվիստ Արթուր Չախոյանը, աղմուկ հանած մանկապարտեզի եւ խաղահրապարակի կառուցման թեմայով ցանկանում էր հանդիպել թաղապետին: Թաղապետարանի աշխատակիցներն արգելեցին, եւ նրանց միջեւ ծեծկռտուք սկսվեց:

Վերջում ծեծկռտուքին միացել էր նաեւ թաղապետ Տիգրան Տեր-Մարգարյանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշումներ է ստորագրել, ըստ որոնց՝Արա Շիրինյանն ու Քրիստինե Մելքոնյանը նշանակվել են Հանրային հեռարձակողի խորհրդի անդամներ:

«Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 25-րդ հոդվածի 22-րդ մասով՝ Քրիստինե Մելքոնյանին նշանակել Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ՝ վեց տարի ժամկետով»:

«Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 25-րդ հոդվածի 22-րդ մասով՝ Արա Շիրինյանին նշանակել Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ՝ վեց տարի ժամկետով», - ասված է որոշման մեջ:

ԿՐԱԿՈՑՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՉԵՆ ԼՍՎԵԼ

ՀՀ ՊՆ-ն երեկ՝ առավոտյան, հայտնել էր, որ մայիսի 29-ին՝ ժամը 01:00-01:15-ն ընկած ժամանակահատվածում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները կրակ են բացել Սյունիքի մարզի Խոզնավար բնակավայրի ուղղությամբ:

ArmLur.am լրատվականի հետ զրույցի ժամանակ, ինչպես հայտնում է Խոզնավարի համայնքապետ Վահան Զաքյանը, կարկոցների հետեւանքով, բարեբախտաբար, տուժածներ չկան, սակայն վնասվել է բնակելի տուն:

Վնասված տունը հեռու է գտնվում դիրքերից, ինչից էլ կարող ենք ենթադրել, որ հատուկ են թիրախավորել: «Գյուղում կրակոցներ չեն լսվել, ես ինքս առավոտյան լուրերից եմ տեղեկացել: Վնասված տան բնակիչն էլ տարեց կին է՝ 90-ն անց, մենակ է ապրում, ինքն էլ չի լսել, որ իր տան ուղղությամբ կրակոց է եղել»,- ասաց համայնքապետը:

Տեղեկացնենք, որ ՀՀ ՊՆ ադրբեջանական կողմին կոչ է արել հետաքննել Խոզնավարի բնակելի տան գնդակոծման փաստը եւ հանդես գալ հրապարակային պարզաբանումներով:

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հարություն Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, զբաղեցնելով թիվ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ կապիտան, ի պաշտոնե ունենալով պետական գաղտնիքին առնչվելու թույլտվություն, լրտեսության, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հանձնելու եւ թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով 2024 թ.-ի դեկտեմբերից մինչեւ 2025թ.-ի փետրվարն ընկած ժամանակահատվածում կատարել է պետական դավաճանություն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը Աստանա միջազգային համաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել Ղազախստանի Հանրապետության առեւտրի եւ ինտեգրացիայի նախարար Արման Շաքքալիեւի հետ:

Շնորհակալություն հայտնելով AIF-ի կազմակերպման եւ ջերմ ընդունելության համար՝ Գեւորգ Պապոյանն ընդգծել է երկու երկրների միջեւ տնտեսական փոխգործակցության ընդլայնման, առեւտրաշրջանառության ավելացման կարեւորությունը:

«Հայաստանը Ղազախստանի Հանրապետությունը համարում է տարածաշրջանում հուսալի եւ խոստումնալից գործընկեր: Մենք համոզված ենք, որ մեր երկրների միջեւ առեւտրատնտեսական համագործակցության զարգացումը կարող է զգալի ներդրում ունենալ ամբողջ եվրասիական տարածքի կայունության եւ բարեկեցության ամրապնդման գործում», - նշել է Գեւորգ Պապոյանը:

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ԲԺԻՇԿՆԵՐԸ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԻՑ

Մայիսի 28-ին «Մուրացան» հիվանդանոցային համալիրում մահացել է մեկուկես տարեկան երեխա: Ինչպես հայտնել էր Shamshyan.com-ը, ծնողները մեղադրում էին բժիշկներին, ովքեր 4 ներարկում էին արել եւ երեխայի մոտ սրտի կանգ էր գրանցվել:

ArmLur.am-ի հետ զրույցում «Մուրացան» հիվանդանոցային համալիրի մամուլի քարտուղար Տաթեւիկ Գրիգորյանը պատմում է. «Երեխան՝ ծնված 27.11.2023թ., հիվանդանոց է տեղափոխվել մայիսի 28-ին՝ հիպովոլեմիկ շոկ ախտորոշմամբ, ծայրահեղ ծանր վիճակում: Ընդունման պահին նա ունեցել է փսխումներ, թուլություն, միկրոցիրկուլյացիայի խանգարման նշաններ: 45 րոպե անց արձանագրվել է սրտի կանգ, սակայն վերակենդանացման ընթացքում սրտի աշխատանքը վերականգնվել է, ինչից հետո երեխան տեղափոխվել է Թունաբանության եւ մանկական վերակենդանացման կլինիկա:

Ըստ մոր պատմածի՝ երեխան 20 օր առաջ բարձր ջերմություն է ունեցել, որի կապակցությամբ 5 օր բուժվել է ամբուլատոր պայմաններում: 2 օր առաջ կրկին ունեցել է փսխումներ եւ թուլություն, ինչի հետեւանքով մայրը նրան երթուղային տաքսիով տեղափոխել է «Մուրացան»:

Փաստենք նաեւ, որ դեռ 2024 թվականի մայիսին երեխան ընդունվել է «Մուրացան» հիվանդանոց, այնտեղ գտնվել է 7 օր՝ 3-ը Մանկական եւ նորածնային վերակենդանացման կլինիկայում, 4 օրը Նորածնային պաթոլոգիայի եւ վաղ մանկական հասակի մանկաբուժական բաժանմունքում: Այնուհետեւ դուրս է գրվել վիճակի կայունությամբ՝ տեղամասային բժշկի հսկողության ցուցումով:

Հավելենք, որ երեխան 2025 թվականին մայիսի 6-ին Վեդու բժշկական կենտրոնից ուղեգրմամբ եկել է «Մուրացան» հիվանդանոց՝ ռենտգեն հետազոտության եւ մանկաբույժի խորհրդատվության, հետազոտությունը արվել է եւ ախտորոշվել է սուր բրոնխիտ, օպստրուկտիվ համախտանիշ եւ նշանակվել է համապատասխան բուժում: «Մուրացան» հիվանդանոցային համալիրում երեխայի վիճակը գնահատվել է ծայրահեղ ծանր, որտեղ, հաշվի առնելով երեխայի ծայրահեղ ծանր վիճակը կատարվել են համապատասխան վերակենդանացման միջոցառումներ, երեխան ստացել է միայն անհրաժեշտ եւ ցուցված դեղորայքային միջամտություն եւ միացվել է ապարատ:

Մայիսի 28-ի լաբորատոր հետազոտություններն ու կլինիկական տվյալներն ապացուցել են վիճակի ծայրահեղ ծանրությունը: Երեխային ցուցաբերվել է ամբողջական վերակենդանացման բուժօգնություն, սակայն ժամը 23:10-ին կրկին արձանագրվել է սրտի կանգ: Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ ժամը 23:50-ին արձանագրվել է մահը»,- փոխանցեցին հիվանդանոցից:

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՏՆՕՐԵՆԻ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչությունում ավարտվել է Երեւանի մանկապարտեզներից մեկի նախկին տնօրենի կողմից առանձնապես խոշոր չափերով գումար հափշտակելու, յուրացնելու, վատնելու, ինչպես նաեւ պաշտոնեական կեղծիք կատարելու վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունը, այս մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«Մասնավորապես, քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ մանկապարտեզի նախկին տնօրենը մի խումբ անձանց ընդունել է աշխատանքի, սակայն վերջիններս փաստացի չեն իրականացրել իրենց աշխատանքային պարտականությունները: Ավելին, աշխատավարձը եւ այլ վճարումներ վերջիններիս բանկային հաշվիներին փոխանցվելուց հետո կանխիկացվել են մանկապարտեզի նախկին հաշվապահի կողմից եւ փոխանցվել տնօրենին: Արդյունքում, մանկապարտեզի տնօրենի կողմից հափշտակվել՝ յուրացվել է առանձնապես խոշոր չափերով՝ 12 մլն 930 հզր 512 ՀՀ դրամ եւ վատնվել է առանձնապես խոշոր չափերով՝ 3 մլն 699 հզր 373 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, տնօրենն իր կողմից աշխատանքի ընդունված անձանց աշխատավարձը եւ այլ վճարումներ յուրացնելու եւ վատնելու նպատակով ստորագրել եւ հաստատել է վերջիններիս կողմից աշխատանքի հաճախելու եւ փաստացի աշխատած ժամերի մասին ակնհայտ կեղծ տվյալներով տեղեկագրեր:

Բացի այդ, քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ հաշվապահը մանկապարտեզի բանկային հաշվից իր անվամբ ՀՀ-ում գործող տարբեր բանկերում բացված հաշիվներին փոխանցել է առանձնապես խոշոր չափերով՝ 15 մլն 993 հզր 511 ՀՀ դրամ գումար եւ յուրացրել այն:

Լ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելը) եւ 445-րդ հոդվածի 1-ին կետով (պաշտոնեական կեղծիքը), Ն.Հ.-ի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելը) (2 դրվագ), 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելուն օժանդակելը), Մ.Զ.-ի նկատմամբ՝ 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելուն օժանդակելը), Ն.Զ.-ի, Ռ.Գ.-ի, Վ.Գ-ի եւ Ս.Հ.-ի նկատմամբ՝ 46-256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետով (վստահված գույքը հափշտակելուն օժանդակելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ»,-ասված է հաղորդագրության մեջ:

ՊԱՏԱՆԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Օրեր առաջ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հիվանդանոցից հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը «պոլիտրավմա» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխել 16-ամյա պատանու:

Դեպքի առթիվ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով քրեական վարույթ էր նախաձեռնվել: Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ մայրաքաղաքի Բագրատունյաց պողոտայի 3-րդ նրբանցքում գտնվող իրենց տանը 16-ամյա պատանին վիճաբանել է 15-ամյա եղբոր հետ, որի ընթացքում էլ վերջինս խոհանոցային դանակով հարվածել է ավագ եղբորը:

15-ամյա պատանին ձերբակալվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

ԻՆՉ ԳՈՐԾՈՎ ԷՐ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԴԱՎԻԹ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԸ

Պետական վերահսկողական ծառայության (ՊՎԾ) նախկին ղեկավար Դավիթ Սանասարյանը երեկ արդարացվեց: Դատարանը ճանաչեց Դ. Սանասարյանին անպարտ եւ արդարացրեց հանցակազմի բացակայության հիմքով:

Նա մեղադրվում էր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու պատճառով: Արդարացման դատավճիռը հրապարակվել է գործը մոտ 6 տարի դատարանում քննվելուց հետո:

Դավիթ Սանասարյանը գրել էր.

«6 ու կես տարի անց ամենակարեւոր ասելիքս է.

Շնորհակալ եմ բոլորից, ովքեր ինձ մի վայրկյան չկասկածեցին ու բոլոր նրանց ովքեր կողքիս մնացին: Առանց ձեզ արդարությունը կխեղդվեր չեկիստական անկյուններում:

Շնորհակալություն ծնողներիս, երեխաներիս: Նրանց շատ եմ լարված պահել պայքարիս ողջ ընթացքում»,- հայտնել էր նա:

Ըստ մեղադրանքի՝ Պետական վերահսկողական ծառայությունում պաշտոնների են նշանակվել պետական գնումների ընթացակարգերում մասնակցող անձինք, որոնք հետագայում ամենօրյա ռեժիմով զբաղվել են իրենց պատկանող ընկերությունների կառավարմամբ: ետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության պետի պաշտոնը զբաղեցնող Սամվել Ադյանն, ըստ մեղադրանքի, միաժամանակ եղել է «Ջորաշեն» ՍՊԸ-ի սեփականատերը, իսկ նույն վարչության գլխավոր մասնագետ Գեւորգ Խաչատրյանը զբաղվել է «Մեդէքսպերտ» ընկերության կառավարմամբ:

«Դավիթ Սանասարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավար, ունենալով ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնելու, ծառայության աշխատակիցներին նշանակելու եւ ազատելու, կարգապահական տույժի ենթարկելու, վերահսկվող օբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելու հանձնարարագրեր տալու, վերահսկվող օբյեկտներից ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ եւ փաստաթղթեր պահանջելու լիազորություններ, խմբային շահերից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչպես նաեւ չի կատարել իր ծառայողական պարտականությունները»,- նշված է մեղադրանքում:

Նշենք, որ Դավիթ Սանասարյանը չէր ընդունել մեղադրանքը եւ հայտարարել էր, որ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 26-ից 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 148 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՆ

Ավելի քան մեկ տարի է, ինչ միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածում ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում հանված ճանապարհի եզրաքարերը տեղափոխվել են Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի ընտանիքին պատկանող «Ոսկե ձկնիկ» ռեստորանի տարածք: Մայիսի 19-ին տեղեկատվական հարցում ենք արել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝ նրան հարցնելով. ««Ոսկե ձկնիկ» ռեստորանի տարածք ի սկզբանե ճանապարհային եզրաքարերի ինչ քանակություն է տեղափոխվել, ներկայումս որքա՞ն է այնտեղ առկա, Դուք այդ ռեստորանի սեփականատե՞ր եք, թե՞ համասեփականատեր»: Մարզպետարանից պատասխանել են. ««Ոսկե ձկնիկ» ռեստորանի տարածքի ճանապարհային եզրաքարերը տեղափոխված են ՀՀ ՊՆ կարիքների համար, այնտեղ մնացել է մի փոքր մնացորդ, որը նույնպես կտեղափոխվի ՀՀ պաշտպանության նախարարության ինժեներական կառույցների համար, քանակի վերաբերյալ կարող եք հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին:

ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը «Ոսկե ձկնիկ» ռեստորանի սեփականատեր կամ համասեփականատեր չի հանդիսանում»:

Մարզպետ Հայկ Ղալումյանի հորը կամ եղբորը պատկանող ռեստորանի տարածքը հո պետական պահեստ չէ՞, որ ճանապարհային եզրաքարերը այդտեղ են կուտակել, ի՞նչ երաշխիք կա, որ անցած ավելի քան մեկ տարում այդ եզրաքարերից մարզպետի ընտանիքի կարիքների համար, կամ ռեստորանի տարածքում չե՞ն օգտագործվել:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ ՉԵ՞Ն ԳՏԵԼ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ 2024 թվականին Տավուշի մարզում օրինական գործել է փայտածուխի 96 արտադրամաս: Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վ. Գալոյանը մեր տեղեկատվական հարցմանը պատասխանել է, որ 2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից Տավուշի մարզում կատարվել է փայտածուխի 2 արտադրամասի ստուգում, որոնց արդյունքներով բնապահպանական նորմերի պահանջների խախտումներ չեն արձանագրվել, հայտնաբերված այլ խախտումների վերաբերյալ համապատասխան գրություններ են ուղարկվել լիազոր մարմիններին: Վ. Գալոյանը նաեւ հայտնել է, թե Տավուշի մարզում գործող փայտածուխի արտադրամասերի քանակի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար կարող ենք դիմել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Փաստորեն, Տավուշի մարզում գործող փայտածուխի 96 արտադրամասից Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ընդամենը 2-ում է ստուգում է կատարել, խախտումներ չի հայտնաբերել, մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվն էլ չգիտի: Եթե չգիտեն, թե ընդհանուր քանի արտադրամաս կա, ինչպես են որոշում թե դրանցից քանիսում պետք է ստուգումներ կատարեն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

590 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ

590 հազար դոլարի հափշտակության գործով կալանավորված Հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության գլխավոր վարչությունից մեկի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Թադեւոսյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Գլխավոր դատախազի հետ ներկա է եղել քննարկման:

ՀՀ քննչական կոմիտեի՝ Հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունից 590 հազար դոլար գումար հափշտակելու դեպքից 1 ամիս առաջ 2025 թվականի ապրիլի 21-ին «Արդարադատությունը որպես արդարության հասնելու գործիք» խորագրով համաժողով է եղել, որին ներկա են եղել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, գլխավոր դատախազ Անա Վարդապետյանը, ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադեւոսյանը, իրավապահ համակարգի ղեկավար կազմը:

Համաժողովի քննարկմանը ներկա է եղել նաեւ 590 հազար դոլարի հափշտակության գործով կալանավորված Հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություններից մեկի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Թադեւոսյանը, եւ հենց այդ նույն համաժողովին վարչապետը պատասխանել է հարցերի, թե ինչու է «ուշանում արդարադատությունը»:

Մայիսի 22-ին հայտնի դարձավ, որ ՀՀ քննչական կոմիտեի Հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունից 590 հազար դոլար գումար է հափշտակվել: Արդյունքում, դեպքից 2 օր անց հայտնի դարձավ, որ 590 հազար դոլարի հափշտակությունը կազմակերպել ու իրավապահներին ինքնախոստովանական ցուցմունք տվել է Հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություններից մեկի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Թադեւոսյանը եւ Էդգար Գրիգորյանը, վերջիններս կալանավորված են:

Ըստ էության, դատելով իրավիճակից, 590 հազար դոլարի հափշտակությունը կազմակերպվել էր Կոմիտեի պաշտոնատար անձի ձեռքով:

Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ մինչ 590 հազար դոլարը հափշտակելը, Տնտեսական հանցագործության վարչությունից քննիչի անցագիր է կորել: Շենքում խառնվել են իրար, ու մեկ օր անց անցագիրը հայտնվել է: Անցել է մի քանի օր, սեյֆի բանալի է կորել ու նորից հայտնվել: Տնտեսական հանցագործների քննության վարչությունում անհանգստացել են՝ չհասկանալով, թե ինչ է կատարվում վարչությունում: Արդյունքում, քննիչները նկատել են, որ շենք անծանոթ մարդ է մտել եւ դուրս եկել, նրան բռնել, կանգնեցրել են եւ հարցուփորձ արել, թե ում մոտ է գալիս ու ինչ կապ ունի վարչության հետ: Անծանոթը տվել է վարչություններից մեկի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Թադեւոսյանի անունը:

Ի դեպ, մինչ օրս անհասկանալի է մնում, թե ինչու էր 590 հազար դոլարը պահվում ՀՀ քննչական կոմիտեում, ինչու չեն հանձնել Կենտրոնական բանկ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտեն գրավոր դիմում է ուղարկել, որ գումարը տեղափոխեն բանկ, սակայն Կենտրոնական բանկը հրաժարվել է գումարը ի պահ վերցնել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՋՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

2025 թվականի մարտական պատրաստության պլանի շրջանակներում, Ադրբեջանի բանակի հրթիռային զորքերի եւ հրետանու ստորաբաժանումներում անցկացվել են մարտական հրաձգությամբ մարտավարական զորավարժություններ՝ ներառելով «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը:

Ըստ ադրբեջանական կողմի հրապարակած տեղեկատվության, զորավարժությունների ընթացքում, հրթիռահրետանային ստորաբաժանումները բերվել են մարտական պատրաստականության աստիճանի, տեղափոխվել են մշտական տեղակայման վայրից դեպի հավաքագրման շրջան, որտեղ տեխնիկապես նախապատրաստվել են կիրառման: «Սմերչ» համակարգերով ստորաբաժանումները զբաղեցրել են կրակային դիրքեր եւ իրականացրել կրակային առաջադրանքներ:

Ադրբեջանական կողմը նշում է, որ զորավարժությունների նպատակն է բարձրացնել ստորաբաժանումների «մարտունակությունը եւ կատարելագործել զինծառայողների գիտելիքներն ու հմտությունները՝ ժամանակակից պատերազմի պահանջներին համապատասխան»:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՎՈՏԱՆԵՐԸ

Կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ գիտական կազմակերպությունների 2025/2026 ուսումնական տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերը եւ դրանց բաշխումը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

Նախագծի հիմնավորման մեջ ասվում է. «Հաշվի առնելով նախորդ տարիների ընդունելության արդյունքները, ինչպես նաեւ ներկայացված հայտերը՝ 2025/2026 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության համար նախատեսվում է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ 180 տեղ, որից 144-ը առկա եւ 36-ը հեռակա:

Նշված 180 տեղերից 109-ը հատկացվել է բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններին՝ 96 առկա եւ 13 հեռակա: Նախագծում 1-ով ավելացել է հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության տեղերի թիվը, սակայն այն լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավվման անհրաժեշտություն չի առաջացնի, քանի որ հեռակա ուսուցմամբ սովորող ասպիրանտները կրթաթոշակ չեն ստանում, բացի այդ առկա ուսուցման համար հատկացված տեղերի թիվը պակասել է 56-ով:

Նախագծում ընդգրկված մասնագիտությունները եւ նրանց դասիչները համապատասխանում են Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկում ներառված մասնագիտություններին եւ նրանց դասիչներին»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է«Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Բաղաբերդթաղամաս, 20/3 հասցեում գտնվող 53,9 ք.մ. խանութ եւ 0,0062 հա հողամաս: Լոտի մեկնարկայինգինը՝ 14180000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.06.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուրաշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝16.07.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկմեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբսահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամբանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտէ ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը,իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը,ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

Yandex Go

ԿԳՈՐԾԻ ՆՈՐ՝ «ՄԻՋՔԱՂԱՔ» ՍԱԿԱԳԻՆԸ

Yandex Go-ում հայտնվել է «Միջքաղաք» սակագինը, որի միջոցով հնարավոր է ուղեւորություն պատվիրել Երեւանի եւ Հայաստանի այլ քաղաքների միջեւ: «Միջքաղաք» սակագնով ուղեւորությունն ավելի էժան կլինի, քան նույն երթուղով ուղեւորությունը «Ustars» սակագնով:

Այժմ «Միջքաղաք» սակագնով հասանելի են երթուղիներ Երեւանից դեպի Գյումրի, Արմավիր, Արարատ, Հրազդան, Ծաղկաձոր, Չարենցավան, Սեւան, Դիլիջան եւ հակառակ ուղղությամբ: Այս սակագինը հարմարավետ կլինի ոչ միայն տեղացիների, այլեւ զբոսաշրջիկների համար, որպեսզի արագ հասնեն Խոր Վիրապ, Սեւանավանք կամ Դիլիջան, իսկ հետո, ըստ անհրաժեշտության, հետադարձ ուղեւորություն պատվիրեն:

Վարորդը նշված հասցեից կվերցնի ուղեւորներին եւ կտեղափոխի այլ քաղաքում գտնվող համապատասխան հասցե: Ինչպես սովորական ուղեւորության պարագայում, այս դեպքում եւս ամբողջ ավտոմեքենան պատվիրատուի տրամադրության տակ է:

«Միջքաղաք» սակագնով հասանելի է երկու տարբերակ՝ «Մեկնել հիմա» եւ «Նախապատվեր»: Օրինակ՝ Երեւանի Կոմիտասի պողոտայից ուղեւորությունը դեպի Գյումրիի Վարդանանց հրապարակ «Ստարտ» սակագնով կարժենա մոտ 16200 դրամ, իսկ «Մեկնել հիմա» տարբերակով՝ մոտ 12000 դրամ: Նախապատվեր հնարավոր է գրանցել պատվերից նվազագույնը 40 րոպե եւ առավելագույնը՝ 72 ժամ առաջ:

Ուղեւորության արժեքում ներառված է ընդհանուր մինչեւ 10 րոպե տեւողությամբ մի քանի կարճ կանգառ:

«Միջքաղաքի» պատվերները ստանում են այն վարորդները, որոնք պատրաստ են կատարել երկար ուղեւորություններ: Որպեսզի օպտիմալացվի պատվերների ժամանակը, վարորդը կարող է նախապատվերների ցանկից նախապես վերցնել հետադարձ պատվեր կամ միացնել «հետադարձ» ռեժիմը. այս դեպքում ալգորիթմն ավտոմատ կերպով կսկսի որոնել համապատասխան նոր պատվեր:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԼԵՐԸ ՀՈՇՈՏԵԼ ԵՆ ՈՉԽԱՐՆԵՐԻՆ

Երեկ արտակարգ դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 01:30-ի սահմաններում Նորատուս գյուղի բնակիչ 35-ամյա Արայիկ Հայրապետյանը տարօրինակ ձայներ է լսում, ապա ընտանքի անդամների հետ դուրս է գալիս եւ նկատում, որ գայլերը ոչխարների հոտը հոշոտել են: Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի հետ զրույցում Արայիկը պատմում էր. «Ժամը 01:20-ի կողմերը կլիներ, տարօրինակ ձայներ լսեցինք, ընտանիքով դուրս եկանք ու ինչ տեսնենք՝ մի իսկական աղետ: Մի քանի գայլեր հոշոտել էին գառներից մոտ 70-ին, մի քանիսին էլ լուրջ վնասվածքներ էին պատճառել: Գայլերի կողմից հոշոտված ոչխարների մեծ մասը մայրացուներ են, որ պետք է ծնեին, մի մասին իրենց հետ տարել են, մի քանիսին էլ սատկած բերել հասցրել են մեր տների մոտ:

Նույն պահին դեպքի մասին տեղեկացրեցինք գյուղապետին, ում հանձնարարականով տեղակալը եկավ, տեղեկացրինք նաեւ ոստիկանության Գավառի բաժին, Գավառի հրշեջ-փրկարարական ջոկատին: Ոստիկանները ու փրկարարները եկան, արձանագրեցին տեղի ունեցածը, հիմա սպասում ենք լույսը բացվի, որպեսզի խնդրանքով դիմենք Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, որ գոնե մեզ օգնության ձեռք մեկնեն»: Գյուղացիներն էլ նշում էին. «Ընտանիքը գյուղի կողմից հարգված ու աշխատասեր, առավոտից իրիկուն ոչխարաբուծությամբ զբաղվող ու հող մշակող մարդիկ են:

Ընտանիքում ապրում են 65-ամյա Աշոտ Հայրապետյանը, 57-ամյա Սուսաննա Կարապետյանը, 35-ամյա Արայիկ Հայրապետյանը, 30-ամյա Ալվինա Անտոնյանը, 6-ամյա Աշոտ Հայրապետյանը, 4-ամյա Անգելինա Հայրապետյանը, 2-ամյա Ալեն Հայրապետյանը եւ 53-ամյա Կարեն Բադոյանը, իսկ ոչխարաբուծությամբ էլ զբաղվում են բանկերից վերցրած գումարներով: Մարզպետարանը կարող է նաեւ օգնել, որպեսզի բանկերը մի 3 տարի վարկերը սառեցնեն, միչեւ մեջքները դզվի, էս աղետից դուրս գան»:

ԵՐԿՐԱՇԱՐԺ Է ԵՂԵԼ

5.1 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել Իրանի հարավ-արեւելքում:

Թեհրանի համալսարանի սեյսմոլոգիական կենտրոնը հայտնել է, որ երկրաշարժը տեղի է ունեցել Քիրմանի հարավային նահանգում՝ տեղական ժամանակով ժամը 01:00-ին `8 կիլոմետր խորության վրա:

Զոհերի կամ ավերածությունների մասին տեղեկություններ չեն հաղորդվել:

Հիշեցնենք, որ Իրանը գտնվում է սեյսմիկ ակտիվ տարածաշրջանում եւ վերջին տարիներին այնտեղ բազմաթիվ ավերիչ երկրաշարժեր են տեղի ունեցել:

Երկրի պատմության մեջ ամենաաղետալի երկրաշարժը տեղի է ունեցել 2013 թվականին, երբ Քերման նահանգի հարավ-արեւելքում գտնվող Բամ քաղաքում զոհվել է առնվազն 34,000 մարդ: Այդ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 6.7 մագնիտուդ:

Իսկ 2022 թվականի հուլիսին 6.1 մագնիտուդով երկրաշարժ տեղի էր ունեցել Պարսից ծոցի ափին գտնվող Հորմոզգան հարավային նահանգում, որի հետեւանքով զոհվեց առնվազն հինգ եւ վիրավորվեց ավելի քան 80 մարդ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՂՈԹՔ ԱՌ ԱՍՏՎԱԾ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Երեկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Այս մասին հայտնում են Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգից:



Այս տոնին հիշատակվում է նաեւ 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական օրը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ տերունի այս տոնը հռչակվել է նաեւ Սուրբ Էջմիածնի ուխտի օր:

Օրվա խորհրդի առիթով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Սուրբ Պատարագի իր քարոզում Սրբազան Հայրը, անդրադառնալով տոնի խորհրդին, նշեց, որ Քրիստոս համբարձումից առաջ պատգամեց իր աշակերտներին անդադար քարոզել Աստծո խոսքը, տարածել իր ուսմունքը եւ դարձի բերել մոլորվածներին:

Պատարագիչ Սրբազանը խոսեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական հիշատակության մասին՝ փաստելով, որ ճիշտ էին արեւելյան վարդապետները, երբ որոշում կայացրին Հայ Եկեղեցու հոգեւոր կենտրոնը, Հայոց Կաթողիկոսության նստավայրը վերադարձնել դեպի իր աստվածօրհնյալ բնօրրանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

«Սիրելի հավատացյալներ, Մայր Աթոռն այն ամուր հիմնաքարն է, որին, եթե հայ ժողովուրդը հավատարիմ մնա, ինչքան էլ հեռու լինի նրանից, ինչքան էլ տառապանքներ լինեն, միեւնույնն է այս Աթոռից բխող լույսը հոգեւոր ուժ պիտի տա մեր ազգի զավակներին դիմագրավելու ամեն տեսակ դժվարության, առաջ շարժվելու Տիրոջ հարության ու համբարձման խորհրդով՝ հավատալով, որ լույսը միշտ հաղթական պիտի լինի խավարի դեմ»,- ասաց Հայկազուն Սրբազանը՝ մաղթելով, որ վերանորոգյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակի լինել հայ ժողովրդի համար հոգեւոր սնուցման աղբյուր եւ առաջնորդի հայորդիներին դեպի փրկության մինչեւ մեր տիրոջ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը:

Սուրբ Պատարագի ավարտից հետո, Մայր Տաճարի Իշման Սուրբ Սեղանի առջեւ, հանդիսապետությամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասն ու ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐԻԵՐԱՆ ԿՇԱՐՈՒՆԱԿԻ «ԻՆՏԵՐՈՒՄ»

Կիսապաշտպան Նիկոլա Զալեւսկին կարիերան մշտական հիմունքներով կշարունակի «Ինտերում»:

Tuttosport-ի տվյալներով՝ միլանյան ակումբի ղեկավարությունը համաձայնության է եկել «Ռոմայի» հետ՝ 23-ամյա լեհ կիսապաշտպանի տրանսֆերը 6.5 միլիոն եվրոյով գնելու համար:

Ֆուտբոլիստը Միլանում վարձավճարով հանդես է գալիս 2025 թվականի փետրվարից:

Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ մրցաշրջանի ավարտը, բայց «Ինտերը» որոշեց վերջնականապես գնել նրա տրանսֆերը: «Ինտերում» Զալեւսկին անցկացրել է 14 հանդիպում, խփել մեկ գոլ եւ կատարել մեկ գոլային փոխանցում:

ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Իտալացի մասնագետ Մաուրիցիո Սարին շուտով կարող է վերադառնալ մարզչական աշխատանքի:

Ջանլուկա Դի Մարցիոյի խոսքով՝ իտալացու նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերում Սերիա Ա-ի երկու ակումբներ՝ «Լացիոն» եւ «Ատլանտան»:

Ամենակոնկրետ առաջարկն արել են հռոմեացիները, որոնք պատրաստ են Սարիին առաջարկել մոտ 2.8 միլիոն եվրո տարեկան աշխատավարձով պայմանագիր:

42 ԳՈԼ

Անգլիական «Չելսին», որը երեկ հաղթեց Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչում, մրցաշարում խփել է 42 գոլ եւ սահմանել Կոնֆերենցիաների լիգայի նոր ռեկորդ:

Նախկինում մրցաշարի ռեկորդակիրը «Ֆիորենտինան» էր, որը 2022/2023 մրցաշրջանում խփել էր 37 գոլ, ըստ ՈՒԵՖԱ-ի պաշտոնական կայքի:

«Չելսին» 2024/2025 մրցաշրջանի Կոնֆերենցիաների լիգայի մրցաշարի եզրափակիչում 4-1 հաշվով հաղթեց «Բետիսին»:

«Չելսին» նաեւ դարձավ պատմության մեջ առաջին ակումբը, որը հաղթեց բոլոր եվրոպական մրցաշարերը:

ՏԻՏՂՈՍՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հինգ անգլիական ակումբներ մեկ մրցաշրջանում տիտղոսներ են նվաճել: «Չելսին» երեկ հաղթեց Կոնֆերենցիաների լիգայում՝ եզրափակչում հաղթելով «Բետիսին» (4-1):

«Լիվերպուլն» այս մրցաշրջանում դարձավ Անգլիայի չեմպիոն:

«Քրիսթալ Փելասը» նվաճեց Անգլիայի գավաթը, «Նյուքասլը»՝ Անգլիայի լիգայի գավաթը, իսկ «Տոտենհեմը» հաղթեց Եվրոպա լիգան:

Պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ Պրեմիեր լիգայի հինգ տարբեր ակումբներ նույն մրցաշրջանում տիտղոսներ են նվաճել:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԲՐՈՒՔԼԻՆ ԲԵՔՀԵՄԸ ՎԻԿՏՈՐԻԱՅԻ «ՀԵՆԱՐԱՆՆ» ԷՐ

Մանուկ հասակում Բրուքլին Բեքհեմը մոր՝ Վիկտորիայի «հենարանն» էր եւ ստանձնել էր «տան տղամարդու» դերը, երբ նրա ծնողները՝ Դեյվիդը եւ Վիկտորիա Բեքհեմները, դժվարին ժամանակներ էին ապրում իրենց ամուսնության մեջ:

Ինչպես Daily Mail-ի լրագրող Քեյթի Հայնդը պատմել է Beckham Breakdown: Inside the Family Feud YouTube շոուի վերջին դրվագում, Վիկտորիան մեծապես կախված էր Բրուքլինից, հատկապես մինչեւ նրա ապագա կնոջ՝դերասանուհի եւ միլիարդատեր ժառանգորդ Նիկոլա Պելցի հետ հանդիպելը:

«Նրանք անբաժան էին: Հիշում եմ, որ Վիկտորիան նրան տարել էր Glamour Awards մրցանակաբաշխությանը 2013 թվականին որպես իր զուգընկեր: Բեմի վրա ելույթ ունենալով՝ Վիկտորիան ասել էր, որ Բրուքլինը դահլիճի ամենագեղեցիկ տղամարդն է: Նա իսկապես դարձել էր իր հենարանը եւ ընտանիքի գլուխը, հատկապես այն ժամանակ, երբ Դեյվիդը անընդհատ ճանապարհորդում էր, եւ նրանց ամուսնությունը դժվար ժամանակներ էր ապրում», - ասել է Հայնդը:

Զույգը հետագայում բացահայտ խոսել էր իրենց հարաբերությունների դժվարությունների մասին, այդ թվում՝ Netflix-ում Բեքհեմի մասին վավերագրական ֆիլմում: Ամեն ինչից անկախ, նրանք կարողացան փրկել իրենց ամուսնությունը: Սակայն 2019 թվականին ամեն ինչ փոխվեց. Բրուքլինը հանդիպեց Նիկոլա Պելցի հետ Լեոնարդո Դի Կապրիոյի կազմակերպած երեկույթին, իսկ 2022 թվականին զույգը շքեղ հարսանիք արեց: Արդեն 2025 թվականին հայտնի դարձավ, որ Պելց-Բեքհեմների եւ ընտանիքի մնացած անդամների միջեւ կոնֆլիկտ էր առաջացել, որը գագաթնակետին հասավ նրանով, որ Բրուքլինը եւ Նիկոլան չմասնակցեցին Դեյվիդի 50-ամյակին:

Բեքհեմների ընտանիքում առկա անհամաձայնությունները թաքցվում էին, բայց իր վերջին հարցազրույցում Բրուքլինը խորհուրդ է տվել իր կրտսեր քրոջը՝Հարփերին. «Ես նրան ասում եմ. գտիր այն, ինչ սիրում ես, եւ պարզապես կենտրոնացիր: Մի՛ լսիր ուրիշ ոչ մեկին»:

Վերջերս նա հստակեցրել է, թե ում կողմն է ընտրել՝ կնոջը ուղղված հուզիչ հաղորդագրություն հրապարակելով Instagram-ում. «Ես միշտ ընտրում եմ քեզ, փոքրիկ: Դու աշխարհի ամենահիանալի մարդն ես: Մենք քեզ հետ ենք հավերժ»:

Daily Mail-ի տվյալներով՝ Դեյվիդն ու Վիկտորիան, ըստ էության, հաշտվել են իրենց ավագ որդուց օտարացման հետ: Չնայած այն հանգամանքին, որ Բրուքլինը եւ նրա կինը գնացել էին Լոնդոն, նրանք անտեսել են հոր տարեդարձը նշելու բոլոր ընտանեկան միջոցառումները:

Ավելին՝ զույգը նույնիսկ Բեքհեմներին չի ասել, որ Լոնդոնում են, երբ մասնակցել են Moncler ապրանքանիշի ֆոտոսեսիային, որը տեղի է ունեցել Հոլանդ Պարկում գտնվող ընտանիքի տնից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

Սա կարող է հատկապես ցավոտ լինել նրանց կրտսեր դստեր՝ Հարփերի համար, ով հուլիսին կնշի իր 14-ամյակը: Նախկինում նա շատ մտերիմ էր Բրուքլինի եւ Նիկոլայի հետ, որոնք հաճախ էին միասին լուսանկարներ հրապարակում եւ նրան անվանում էին իրենց «փոքր քույրը»: Հիմա մնում է գուշակել, թե արդյոք ավագ եղբայրը կայցելի նրա ծննդյան օրը:

ՊԱՏՐԱՍՏ Է ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ ԱՄԱՌԸ

Քայլի Ջենները պատրաստ է դիմավորել շոգ ամառը, եւ նա դա անում է ոճային: Քայլին Instagram-ում լուսանկարների շարք է հրապարակել իր նոր Khy x Dilara Findikoglu համագործակցությունից զգայական կարմիր զգեստով: Զգեստի արժեքը 398 դոլար է: Լուսանկարներից մեկում Kylie Cosmetics-ի հիմնադիրը նստած է՝ ցուցադրելով զգեստի ամուր ոճը եւ լրացնելով կերպարը թափանցիկ կրունկներով սանդալներով: Մեկ այլ կադրում՝հայելային սելֆիում, Քայլին կեցվածք է ընդունել՝ կենտրոնանալով իր նուրբ դեկոլտեի եւ մուգ մազերի մեղմ ալիքների վրա:

Լուսանկարների շարքում տեղադրված կարճ տեսանյութում Ջենները ցուցադրել է դիզայնի գլխավոր առանձնահատկությունը՝ ատլասե ժանյակները հետեւի մասում՝ ընդգծելով ուրվագիծը:

Երկրպագուները շտապել են արձագանքել մեկնաբանություններում. «Սա երազանք է», «Այս կարմիրը իսկապես կրակոտ է», «Այս զգեստի մանրամասները կատարելություն են»:

● *Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում մայիսի 30-ին, 31-ին, հունիսի 21, 22-ին տեղի կունենա «Ձին խաղը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500, 3000, 3500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:
Սյուզաննա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում եւ որքա՞ն ժամանակով կարող է հետաձգվել քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ:
Կարեն Վիրաբյան (45 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու ուղեգրումը տուն-ինտերնատ կարող է հետաձգվել՝ քաղաքացու կամ նրա խնամակալի կողմից սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) ներկայացված դիմումի (հիմնավոր պատճառների՝ առողջական խնդիրներ, հարազատի մահ, եղանակային պայմաններ եւ այլն) հիման վրա, մինչեւ 6 ամիս ժամկետով:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացին պետք է ներկայանա բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի շուրջօրյա հաստատություն (տուն-ինտերնատ) ուղեգիրը ստանալու օրվանից 7-օրյա ժամկետում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Ավտովթար է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 07:10-ի սահմաններում Երեւան-Գյումրի-Բավրա Մ-1 ավտոճանապարհի 65 կմ հատվածում Շիրակի մարզի բնակիչ, 33-ամյա Մարտին Հ.-ն իր վարած Nissan Fuga մակնիշի ավտոմեքենայով դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե արգելապատնեշին եւ մոտ 50 մետր գլորվելով՝ գլխիվայր հայտնվել ձորակում՝ բախվելով քարերին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+7 + 10 + 16+ 19
Կոտայքի լեռներ	+9 + 12 + 16+ 19
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 10 +16 + 18
Գեղարքունիք	+10+ 15 + 17+ 21
Լոռի	+ 6 + 10 +15 + 18
Տավուշ	+ 9 + 12 +18 + 22
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+12 + 15 +18 + 24

Արարատ	+10 + 13 + 20+ 25
Արմավիր	+9 + 12 + 20+ 24
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 14+ 19
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 13 +19 + 24
Սյունիքի հովիտներ	+10+ 13 + 22+ 26
Սյունիքի նախալեռներ	+7 + 10 +16 + 19
ԼՂՀ	+ 6 + 9 +13 + 17
Երեւան	+9 + 11 +20 + 26

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.5.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*